## ԻՄ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՀԱՒԱՔԱԾ

## ՄԻ ՔԱՆԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1. — ԱՐԱՄՈՒՍ գիւղում (գաւառ Կոտէից) ս. Աստուածածնայ մատրան մօտ. «ՑՄՁ թուականութեանս Թորգոմեան ես Գրիգոր Սիւնեաց «տէր որդի Վասակա Հայկազնի շատածախ գանձիւք գնեցի զգիւղս ի «Հագարացեաց Արամուլքս ընդ նմին եւ նորոգեցի զձոր... այս իմս իշ«խանութեան վասն ոգոյս իմ մեղուցելոյս կամօքն Ա.յ.»: Այժմ այս արձանագրութիւնը կոտրել են եւ պատ շարել. միայն «ՑՄՁ» թուականը կերեւայ: Ալիշան չունի այս արձանագրութիւնը:

2. — ԱՐՈՒԾ գիւղում. «Ի թուիս Հայոց ՉՀԴ ի փաթշայութեան «Արղուն խանին ի Թագաւորութեան Դեմէտրէի եւ ի պարոնութեան «մխարգրձելին եղբաւրն Իւանէի որդոյն մեծին Շահնշահի ես Մակլի«խուսան Աղայիս որդիս եկի յԱրուճ, իմ հաւրս գանձագին գեղս եւ «Թողի զհացին չարխատն հաստից ի Ռ տարի պարոն որ այս գեղիս տէր «գայ (?) իմ աղբրաց է կամ իմ որդեց կամ հայու կամ վրացի որ զայս «գիրս խափանէ եւ այլ չարխաթ առու յԱյ. եւ այս եկեղեցոյց նզոված «է եւ զվարձս Ուգա... եւ ՅԺԸ հայրապետացն նզոված է եւ ամէն ազգին ալ.»: Այս արձանագրութիւնը կիսատ հրատարակուած է "Արարատ,,ում, եր. 144:

3. — Ահաւասիկ այն արձանագրութիւնը, որի համար Ալիշան ասում է. «կարեւոր... թէպէտ եւ կարօտ ստուգագոյն ընթերցուածոյ». («Արարատ», եր. 144). «ՅԺԶ թուականին Հայոց յիշխանութեան Աշոտոյ եւ ի տէրութեան Սմբատայ Հայոցս սպարապետի Բագրատունւոյ եւ «ի կաթողիկոսութեան Զաքարիայի եղեւ կռիւ ընդ Ցարուճ եւ ընդ Կոշ «եւ ընդ Գառնոյն ի Հարարուճ զԿոշ եւ զԳառնոյն եւ կամաւ զԿոշս վա«նականն եւ ի Բրթաղնին ընդ անիլին մին թանի վաճառեցին. ես «Գրիգոր որդի Վասամայ ծառա Սմբատա Բագրատունւոյ եկի հրամանաւ «Սմբատա եւ ես հաստատեցի զջուրն ընդ Կոշ եւ ընդ Ցարուճ զինչ «լիւբեանց»:

4. — Մի այլ արձանագիր, աւելի նոր. «Ի թուիս Հայոց ՉԼԴ ի «փաթշայութեան Արղուն խանին ի Թագաւորութեան Դեմէտրէի պարո«նութեան սպասալար խարկրծեալին եղբաւրն Իւանէի որդոյն մեծ Շա«հնշահի ես Մանկլիխուսան Աղասիս որդիս եկի Արուճ իմ հաւրն գան«ձագին գեղս եւ Թողի զհացին չարխատն հաստից...»:

digitised by A.R.A.R.@

4. — Դարձեալ. «ՅԺԶ Թուականիս Հայոց յիշխանութեան Աշոտոյ «եւ ի աէրութեան Սմբատայ Հայոց սպարապետի Բագրատունւոյ եւ ի «կաթուղիկոսութեան Զաքարիայի եղեւ կռիւ ընդ Արուճ եւ ընդ Կոշ եւ «ընդ Գուսան ...է...ճ...ար Արուճ զԿոշ եւ զԳաւարին եւ կամա «զԿոշա վանականին եւ ի Բրթավաքին ընդ անկին մին թաժի վաճառե- «ցին. Ես Գրիգոր որդի Վասակա ծառայ Սմբատա եկի հրամանաւ Սմ- «բատա եւ ես հաւասարեցի զջուրն ընդ Կոշ եւ ընդ Արուճ զինչ իւրեանց «մնիկ ՌՍԱՄԵՐ (?) լիլ (?)։ Ա. եւ կէս Կոշա եւ .Ա. Արճո արդի թէ այլ «ոք հակառակի եւ ջանա այլ ...ւնիս սատ Յու...զ ի ՅԺԸ առ րբ «հայրապետացն նզովեալ լիցի եւ ի Սմբատա մահու ի... պատուհասի»։ Այս արձանագրութիւնն եւս կիսատ է "Այրարատ,,ում, անդ։ Նոյնտեղ Ալիշան ասում է, թէ «Արձանագիր շինութեանն (Գրիգորի Մամիկոնեան եկեղեցւոյ) ցարդ ոչ երեւեցաւ, եւ կարծի ծածկեալ 'ի բրգաձեւ պարսպաց զոր այլազգեաց ածեալ է առ դրամբքն»։

5. — Բայց նոյն եկեղեցւոյ արեւելեան պատի ներքեւի մասում կարդացւում է. «Ի եւ Թ ամի Կոստանտնի մարերի ամսոյ որ աւ[ր] Ժ «եւ Ե հիմնարկեցաւ սուրբ կաթողիկէս ի ձեռն Գրիգորի Մամիկոնենի «Հայոց իշխանի եւ Հեղինէի նորին զուգակցի ի բարեխաւսութիւն շինաւղաց զսա Երուսաղէմ (?) Քս. Ած.»։

6. — Յիշեալ եկեղեցւոյ հարաւային պատի վրայ. «Յանուն Այ. «ինչ (?) Թուականի. ՆԼԶ ես Սմբատ Շահանշահ որդի Աշոտո Շահանշահի «ազատեցի վասն իմ հաւրն հաւգոյն. եւ իմ արեւշատութեան եւ մեղաց «թողութեան զշալակաւոր ի բաժէ շնորհիւն Այ. եւ եթէ ոք իմ վճռիս «զիմադարձ լինի նզովեալ (լ)իցի յԱյ. ՅԺԸ եւ յամենայն սրբոց եւ իմ մեղացս տէր է»։

7. — ԿՈԽԱՆ. վանքի հարաւային պատի վրայ. «+ ՆԼ Թուակա- «նիս ի կաթուղիկոսութեան տն. Խաչկա եւ ի թագաւորութեանն Սմբա- «տա եւ յասպարապետութեանն Գրիգաւրո յիշխանաւորութեան Աշոտո «որ երեւ Աշոտ յԱմանէ զջաղացսն եւ զեգին եւ զհողն Կովեղձ ի սբ. «եկեղեցիս վս. Շահանշահի արեւշատութեան եւ մեղաց թողութեան եւ «որ ոք սպասաւորէցան ի սուրբ Եկեղեցիս Ած. յիւր ի միւսանգամ գա- «լստն»։ Դարձեալ՝

8. — Նոյն վանքի հարաւային դրան ճակատին. «Շ. Ծ. Թվակա- «նիս ես հայր Յոհաննես բազու[մ] աշխատութեամբ ամիկ երգուեալ կո- «չա տանուտիրաւքս դատաւորն աւագէրէցն ՍՆՆԿՆԽԱԳՆ Թափեցին «զինաջուր առուն Մ. գահեկանի գիր որ Աւագին տան եւ որ մաջի յա- «հա[ւոր] ... ՅԺԸ. ից նզովեալ եղիցի»։

9. — Նոյն դրան ձախակողմը, պատի վրայ եւս կայ մի արձանագրութիւն, բայց խոնաւութիւնից փճացած է եւ անվերծանելի. միայն կարդացւում «Շ» թուականը. Իսկ մի ուրիշ քարի վրայ ալ կերեւայ «ՌՒԸ» թուականը։

digitised by A.R.A.R.@

11․ — ԿՈՒԱՇի եւ ԲՒՒՐԱԿԱՆի միջեւ ճանապարհին գտնւում է Պետրոս Ակնատես վարդապետի խաչարձանը, հետեւեալ արձանագրութեամբ․
«[+] Ես Պետրոս վդ․ կա․․․ի դն․․․ ան(?)ուկին լէն զոր յառաջ տեսա
«հոգս ակամբ ՈՒԴ թուին երանաւք․․․․․ց եւ իջանիլ ամբ․․․ վիս չէն․․․
«մե․․․ մաչ․․․ սեւ սբ․ նայր․․․ին խաւար լուսեղէն յարեւելից ․․․
«սուրբ նշանին Այ․ եւ զկնի ա․րն ․․․․ հարեցաւ ամե․․․ ես ․․․ եմ եւ
«գի․․․գ․․․զաւեր զր(?) եւ ց․․․ի ա․․․ ի Զաքարէ եւ ․․․ մեծին
«աւրդու(?) որ զնոյն ձեւ եւ զկերպ ունէին որ․․․ խ․․․ջին Քի․ եւ
«սբ․․․․աւ երկեր․․․ ծա․․․ Հա(յ)աստանեաց եւ որ եւ մկան(?) ․․․
«[արեւ]շատութիւն Շա․․․ին եւ պար․․․ն ․․․ [երկի]րպագուաց սբ․
«Ած․ ա[ւ]ու[ր] ատեանն Քի․ AMEN Ամէն»։

12․ — ԲՒՒՐԱԿԱՆի ս․ Յովհաննէս եկեղեցւոյ մէջ մի խաչքարի վրայ․ «Սբ․ խաչս բարէխաւս է Յովհաննէս կաթ․ թվ․ ՋԶԵ»։

13․ — Եկեղեցւոյ ճակատի վրայ․ «ՆԼԴ թուականիս ես հայ(ր) «Գրիգոր որ Հայաթաղի զակնս գրի եւ զատուս հանի եւ տէրունի հրա- «մանով զՀայաթաղի հնգլիկ(?) սրեցի Բիւրական․․․»։

14․ — Այս արձանագրութեան վերեւ կայ մի ընդարձակ գրութիւն եւս, բայց դժուարընթեռնլի է։

15․ — ՏՆՂԵՐի եկեղեցւոյն համար Ալիշան ասում է․ «Թէպէտեւ 'ի տեղիս տեղիս խախտեալ եւ հերձեալ՝ այլ տակաւին կանգուն կայ եկեղեցին լքեալ 'ի քրիստոնէից, զորով այլազգեաց ածեալ էր պարիսպ յարմար ապաւինի, որ արդ կիսակործան է»․ (Այրարատ, եր․ 146-147)․ մինչդեռ եկեղեցին կանգուն է եւ ժամասացութիւն են անում մէջը։ Աջ խորանում մի գերեզման կայ, որի վրայ քանդակուած է գաւազան եւ «Վդ․ Յվ․» գրութիւնը։ Իսկ նոյն տեղ,

16․ — Ձախ խորանի դրան մօտ, պատի վրայ գրուած է․ «Ի նաւակատեաց սբ․ Տիրամաւրն մատուցանի պատարագ ամենայն խորանս «Վախախին մաւր Մամախաթունին շինողի եկեղեցւոյս»։

17․ — Նոյն եկեղեցւոյ պատի չուրջը գրուած է․ «Շնորհիւ ․․․ «Սարգիս եւ Թաճ․․․ Ած․ածնիս կառ եւ սպասաւորք սորա խրա․․․․․ «ի տաւնի սբ․ Սարգսին յԱյ․ ի թվ․․․․»։

18․ — Ներքին եկեղեցւոյ արտաքին դրան առջեւի գերեզմանների վրայ․

ա․ «Վարդապետ Երեմիայ»։
բ․ «Մամա խաթուն»։
գ․ «Ստեփ․ քհ․ Մար ․․(?)»։
դ․ «Սուլանա որդուն է»։
ե․ «Վարդապետ Սարգիս»։
զ․ «Աւետիսն է երից որդին»։
է․ «Սարգսայ»։

digitised by A.R.A.R.@

ը. «....յրաձայր»։

թ. «Թագիագ(ուլ?)»։

ժ. «Տիրաւց»։

ժա. «Հազարչահի»։

18. — Նոյն եկեղեցւոյ դրան դիմացի սեան խոյակի վրայ. «Ի Թիւ.
«ՈՀ. Ես աղբայրիկ վարդապետ չինեցի զեննցի զեկեղեցիս եւ զգաւիթս
«եւ միաբանեցա արդեամբք եւ սպասաւորքս հաստատեցին. Բ. աւր.
«ժա. (?) մինչ. (?) [*] սբ. Խաչին որ խափա[նէ] ... հո...»։

19. — Փոքր ժամատան արեւմտեան պատի վրայ. «Ի Թս. ՉԻԳ.
«Ես Շիրազարս եւ ամուսին իմ Աղչայս եւ Սթաիկս որդաւք մերաւք միա-
«բանեցաք սրբոցս եւ տվաք զմեր հոգո բաժին Մ. Ռ. սպ(իտակ). Հ.
«ոչխ(ար). Ա. կանթեղն. Ա. Նափորտ եւ մեզ խոստացան ի յամին Ե.
«սբ. պատարագ ի հոգոյն գալ սկսանին եւ անպակաս առնէ որչափ կեն-
«դանի ենք պարոնին ամենեւին (?) չմեռանինք զմեր աւրն մեզ առնեն
«կատարիչք գրոյս աւրհնին յԱյ. ամէն. | Շահ.»։

20. — Նոյն ժամատան հարաւային պատի վրայ. «Շնորհիւն Քի. ես
«Էմնոսս եւ ...Թուենս եւ որդի մեր Սագոնս [միաբանե]ցաք սբ. ուխ-
«տիս եւ տվաք զմե[ր] Այ. բաժինս եւ ընկալաք ի յամին ... [պատ]ա-
«րագ ի Նոր Կիրակէն որչափ կենդ[անի] ենք մեր ծնողաւն եա ել. Մ.
«ՉԵ...»։

21. — Մի եւ նոյն պատի վրայ. «Կամաւն Այ. ես Վասիլս եւ
«Քրիստոնայս միաբանեցաք սբ. Ս.Ծ. ածնիս եւ տվաք ինչս եւ սոքա
«խոստացան ի տարին Բ. պատարագ ի տաւնի Յոհաննու եւ Յակոբա
«կատարիչք գրոյս աւրհնին յԱյ. ամեն .... գրիչ»։

22. — Վերի արձանագրութեան ներքեւի քարի վրայ. «Ես Գերգս
«եւ աղբրանցս միաբանեցաք սբ. ուխտիս եւ խոստացան մեզ ի տարին
«Բ. աւր պատարագ ի տաւնի Գէորգա զաւրաւարի կատարիչքն աւրհնին
«ի Տնէ. ։ ՉԽԲ.»։

23. — Նոյնտեղ, հիւսիսային պատի վրայ. «ՈՋԳ. ողորմութեամբն
«Այ. ես Շարէս միաբանեցա սբ. ուխտիս եւ ետու սմա .....»։

24. — Դրսի դրան ներքին կողմը կայ մի անվերծանելի արձա-
նագրութիւն.

25. — Արեւմտեան դրան ճակատը. «Շնորհիւն Այ. ես Մամա խա-
«թունս չինեցի զեկեղեցիքս զմեծ եւ զփոքր եւ զժամատունս յիշատակ
«ինձ եւ առն իմոյ Վաչէի իսկ բնակիչք սբ. ուխտիս հաստատեցին մեզ
«ի տարին պատարագ ի տաւնի Վարագա սբ. Խաչին զամենայն եկեղե-
«ցիքս մատաղով եւ սիրով իսկ որ զգրեալս խափանէ նայ տայ պատաս-
«խանի առաջի Յի. Քի. Մխիթար Գրիչ»։

---

[*] Թերեւս՝ «Բ օր ժամ ինձ...»։

digitised by A.R.A.R.@

27. — Փոքր ժամատան արեւմտեան պատի վրայ. «ՌԿԲ. շնորհիւն «Քի. ես Խնծորիկս միաբանեցա սբ. ուխտիս Տեղերու եւ ետու յառաջ «զիմ այգին ի Թամիր եւ յետ իմ մահուան այլ զինչ լինի եւ սոքա «ետուն ի տարին. Բ. ւոր պատարագ ի Խնծորկնի սբ. ...անէ»։

28. — Կաթողիկէի վրայ գրուած է. «Թվ. ՌԿ»։

29. — ՓԱՐՊԻ. ս. Գրիգոր եկեղեցւոյ արեւմտեան դրան ճակա«տը. Ցանուն հաւր ամենակալի կամաւ որդո միածնի եւ միջնորդութբ. «սբ. հոգոյն ես Աղբա որդի Իւանէի որդո մեծի Շահնշահի ես Աղբիղս «թողի զՓարպո այգեց չարիատն եւ արարի յիշատակ ազգէ յազգ արդ «մի ոք մերոց կամ յաւտարաց խափանել կամէ եւ որ խափանէ ՑԺԸ հայ«րապետեց նզոված եւ յամէն ազգէ նալաթ ՋԾԴ թվին»։

30. — Ծիրանաւոր անուն ուխտատեղին, Փարպի գիւղի մէջ, ունի գետնափոր հաղորդակցութիւն ձորի հետ։ Դուռը միապաղաղ ահագին քար է, նիգն ալ իրանից։ Արեւմտեան դրան վերեւի արձանագրութիւնն է. «Թուին ՌԿ ես Զաքարի ամիր սպասալար Հայոց եւ Վր«աց ազնուեթեամբն Քի. առի զաշխարհս ի Տաճկաց եւ ազատ արարի «...պու... [աւ]անիս յամեն [յար]կէ որ խափանէ ... [ն]զովեալ եղի«ցի ի Թվ......հի Շահա[նշահի] ... գու......»։

31. — ԵՂՈՒԱՐԴ. ս. Նշան եկեղեցի, հոյակապ եւ հնայէն։ Արեւմտեան դրան ճակատին. «Թվ. ՋԾ շինեցաւ եկեղեցիս»։ Այս թուականը սխալ է «Արարատ»ում, եր. 197։

32. — Դրան մի կողմը՝ «Կանանչինի». իսկ միւս կողմը՝ «Ցուսամին է»։

33. — Եկեղեցւոյ հարաւակողմը, խաչի մը վրայ. «Խաչս ի Գս. «Ած. յիշեցէք զմիաբան սբ. Առաքելոցն»։

34. — Նոյն հարաւակողմը, պատի վրայ. «Թվ. ՌՀՁ ես Մովսէսի «որդի Գրիգորն սարկ[աւագ] | Թվ. ՌՃՂԴ վերատին նորոգեց[աւ] | Թվ. «Ռ»։ Մի փոքր հեռու. «Թվ. ՌՀՁ»։

35. — Կաթողիկէի արեւմտեան պատի վրայ կան գեղաքանդակ պատկերներ, իսկ տակը. «Ես Մանվէլ եպիսկոպոս որդի պարոն Աւա«քին Թոռն պարոն Աղբէկին ետու զիմ այգին Աշտարակա որ է տեղն «Ջիգամէն (?)։ Եւ ջաղացս իմ որ է տեղն բնական վանիցս ես էլ հաստա«տեցի սբ. Ած. ածնիս ով որ հակառակ իմոց կամ աւտարաց ԳՃ եւ ԺԸ «հայրապետաց անիծած եղ[ի]ցի ի Թվին Ջի»։

36. — Վերի արձանագրութեան տակը, խաչի մը կողքին. «Սբ. «Նշանս տէրունական Տէր Մանվէլին լեր քաւարան. խաչս բարեխաւս «պարոն Աւագին եւ Խոնճին».

37. — ԿԱՐԲԻ. Աստուածածնայ եկեղեցւոյ զանգակատան վրայ. «Շնորհիւն Այ. գեղովի նորոգեցին սբ. կաթուղիկէն Թվ. ՌՃԿԹ»։

38. — Վերինին տակը. «ՋՁէ շնորհիւն Այ. ես Բուրդ Անբերդեցի «իշխանաց իշխան որդի Տային որդոյ Երգին Խոռն Ամբերդեցի Վաչէ

digitised by A.R.A.R.@

«իշխանի առն քաջի եւ պատերազմողի եւ ամուսնի Մխուանդ խաթուն
«դուստր Ամրպէկնի թոռն Աթաբակ Աւագնի եւ հարազատ որդի Ամր
«Զբբն (?) տէր Անբերդոյ գաւառիս եւ ծառայք անմահ թագաւորին մերո
«Քի. յաղորմութի. մեծն Այ. ապաւինեցա որ ի բազմանալ ...»։

39. — Մի ուրիշ տեղ՝ «ՊՁԲ» թուականը միայն կերեւի։

40. — Այնտեղ կան նաեւ բազմաթիւ արձանագրութիւններ, բոլորն ալ անվերծանելի։

41. — ՑՈՎՀԱՆՆԱՎԱՆՔ. եկեղեցւոյ հիւսիսային խորանի հարաւային պատի վրայ. «Ես Աչոտ որդի Երկաթա (կամ Երծաթայ ?) տարա-
«ժամ էլի յաշխարհէ տուի զիմ այգին ի սբ. Կարապետն եւ սոքա խոս-
«տացան տարին Դ. պատարագ ի տաւնի Կիւրղի Բ. ԻնՁ Ա. իմ հաւրն
«Ա. իմ մաւրն եւ ես Ռուզուքան մայր Աչոտոյ իմ հայրենիք թէ ինչք
«... սբ. Կարապետոյս յետ ելից իմ կատարիչ.....»։

42. — ՍԱՂՄՈՍԱՎԱՆՔ. աջ խորանի ճակատին. «Ես Վաչէ շինեցի
«զեկեղեցիս եւ արարի արդիւնս յոլովս եւ ետու զիմ գրամագին այգին
«Սէրկ[եւ]լի եւ հաստատեցին Գ. խորան զչարաթ աւր պատարագ. Ա.
«ինՁ. Ա. Դաւթի. Ա. Մամա խաթունին»։

43. — Ներքեւի դրան ճակատին. «Մամա խաթունին է խորանս», եւ ուրիշներ։

44. — Սաղմոսավանուց ձորում կայ վանքի մը աւերակ, քարաժայռի առջեւ։ Այնտեղ քարի մը վրայ դրուած է. «Թվ. ՈԽ ...հանի ...
«Քս. եւ զՎա[չէ]»։ Այս աւերակը կը կոչուի Թուխ մանուկ։

45. — ԱՍՏՈՒԱԾԸՆԿԱԼ. աւերակների մէջ մի խցի դրան ձախ կողմը. «Ի ՈԾՁ թվիս. նորոգեցաւ Ած.ածինս եւ հաստատեցաք առաջնորդ
«սբ. ուխտիս տր. Գրիգոր եւ Ղազար Վարդա։ Յոհան հար։ Ծերթա։
«Ած։ Ատ։ Ըստակ. Սաք. Փա. եւ այլ միաբանացս որ հաս(տա)տեցաք
«զուխտ միաբանութե. հոգոց մերոց ի ՌՀյ (?) սբ. եկ լ (?) եւ ելից մեր-
«աչրս ժամ. եւ Ա։ եւ Գարեգին (?) եղբարս Ժ։ հաստ(ատեցին) առաջ նո-
«րակատս (?) հնածին (?) եւ որ ...ն զանայիսրնարաց (?) մեղաց մեր ...
«ի սոյն (?) ամի (?) սահմանեցաւ ... ամենա... Մ։ բխորն պատե...
«զ....ի տաւնի Պետրոսի եւ Պաւղոսի»։

46. — Այնտեղ, խաչարձանի մը բեկորին վրայ. «Աջ Այ. ոգի Այ.
«Թ. Զ... ..նային Ղազարայ։ եւ Վարդր...»։

47. — Եկեղեցւոյ աջ կողմի դրան վերեւ. «Ես Էչպէկս Հարպի որ-
«դի զխորանս շինեցի իմ հալալ արդեանց սպասաւորք սորայ Գ։ աւր
«ժամ հաստատեցին ով խափանէ դատի յԱյ»։

48. — ՂԱՐԱԲՈՒԼԱՂ. ս. Աստուածածին եկեղեցւոյ արեւմտեան դրան ճակատին, մի գերեզմանաքարի վրայ. «Այս է .....յնաց կա-
:ռուցեալ ի նա ես Աչ.:. որ իւր արեամբն նահատակեցաւ յայամ սահ-
:մանիս անորթի իշխանաց [իշխ]ան Իվանէի կանկնեցի զխաչս ..անի...

digitised by A.R.A.R.@

«Աձ. Թ. Ն···ՐՐ···ացի··· Ս····»։ Այս քարը բերուած է գիւղի հին գերեզմաննոցից։

49. — ՄՕԼԼԱ ՂԱՍՐՄ. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ պատի վրայ. «Բս. Աձ. յիշեա զԳրիգոր Գնթունեաց տէր»։ Այս մասին մի յօդուած գրած է Միաբան, «Արարատ» ամսագրում, Թ. 1892-3 ?

50. — ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԷ գիւղի մէջ կայ եղեր մի մեծ քար, վրան գաղափարանիշներով գրած. բայց չկարողացայ գտնել։

51. — ՔԱՆԱՔԵՌ գիւղում կան հետեւեալ արձանագրութիւնները, որոնք տարբեր կերպով տպուած են «Արարատ»ում, եր. 296.

«Աձ. այիւն շնորհաց Հոգւոյն աքքայարան. «| Որ եւ կոչի Աձ.ա-«ծին··· Եւ անմարմնոց հրեղինաց բնակարան | ··· Վաճառականքս ա-«մենեքին ժողովեցան | Հալալ ընչից եւ մթերից կանգնեցուցին պայ-«ծառ գիմօք······»։

52. — Այլ արձանագրութիւն. (հմմտ. «Այր.» 297). «Ահաւոր ա-«նուամբն Այ. եւ Պետունեայ եւ կենակից··· բարեխաւս մեզ յիշատակ «···։ Եւ զհայրենիի այգիս զաւակաց մերոց Տողասլաին եւ այլ տղոցն «··· Գրօղս զՄխիթ(ար)ս յիշեցէք. ի Թու. ՋԾԴ ···»։

53. — Մի այլ եւս. (հմմտ. «Այր.» 298). «Ցանուն Այ. ես Պարսե-«ամս եւ որդի իմ Ճաճնա ··· Մաթուլթանա խաթունս ··· սրտի յաւժա-«րութ. ··· Պետեւանիին ··· յորդեցէ որդիք ··· ով զաւի առնէ ····· «Թվիս ՋԾԵ. վկայ Աձ. եւ Աղուչափն, Կուլալն, Տերերն, Վահրամ, «Մանթին, ··· Խոցաղեղ, Դեղ, Ցակոբ, Աչրափն, Խաչենեցի Վահ-«րամ, Գերգ, Սմպատ ··· Ամիրատան Բջնեցի ··· Պ. ի պարոն, եւ, «Մ···»։

ս. Էջմիածին.

ՄԽԻԹԱՐ Վ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

## ԱԶԴ

Կը խնդրուի մեր բաժանորդներէն փութով հասցնել իրենց բաժնեգինը։ Պէ՞տք է կրկնել, թէ ամէն երկրի մէջ թերթի մը բաժնեգինը կանխիկ կը վճարուի։

ԽՄԲ. ԲԱՆԱՍԷՐԻ

Paris .— Impr. Scorio, 25 rue Turgot.

La Gérante : C. Carbonnel.

digitised by A.R.A.R.@